

Հայաստանի հանրապետության
Կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 179Ա
06/24/2008

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ 2009-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մարտի 5-ի թիվ 5 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փիլիսոփայությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեսլականը և 2009-2011 թվականների Ռ-ազմավարական ծրագիրը (կցվում է):
2. Սույն որոշման ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2005 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 593 Ա որոշումը:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակազմին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեսլականի և 2009-2011 թվականների Ռ-ազմավարական ծրագրի անգլերեն և ռուսերեն թարգմանությունները:
4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տնային էջում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեսլականի և 2009-2011 թվականների Ռ-ազմավարական ծրագրի հայերեն տարբերակի տեղադրումը՝ որոշման ստորագրումից հետո, իսկ անգլերեն և ռուսերեն տարբերակների տեղադրումը՝ թարգմանությունից հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
Ջավադյան**

Արթուր

2008 թ. հունիսի 28
Երևան

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը, առաջնորդվելով.

- Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ,
- «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կենտրոնական բանկին ամրագրված խնդիրներով,
- տնտեսության կայուն զարգացման միջազգային լավագույն փորձով և եվրոպական ինտեգրման հեռանկարով,
- Հայաստանի՝ ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարում ունենալու ձգտումով, ինչպես նաև
- կենտրոնական բանկերի՝ որպես տնտեսական կարևորագույն ինստիտուտի զարգացման միտումներով և այդ ոլորտում միջազգային լավագույն փորձով

և ձգտելով մշտապես ճանաչված լինել որպես հեղինակավոր, թափանցիկ, անկախ, գիտելիքով կիսվող և արդյունավետ կառույց, նախանշում է ՀՀ կենտրոնական բանկի ներուժի զարգացում և ռեսուրսների ուղղորդում.

Դրամավարկային քաղաքականության ոլորտում

- Գնաճի լիարժեք նպատակադրման ռազմավարության ամբողջական իրականացում և այս ոլորտում միջազգային առաջավոր փորձի զարգացումներին արագ արձագանքում:
- Բաց, թափանցիկ, հասարակության համար առավել ընկալելի և կայուն սպասումներ ձևավորող դրամավարկային քաղաքականության իրականացում:

Ֆինանսական համակարգի կայունության և զարգացման ոլորտում

- Ֆինանսական, այդ թվում նաև վճարահաշվարկային, համակարգերի ընդհանուր կայունության և հուսալիության ապահովում՝ շարունակական մոնիտորինգի, համալիր կանխարգելիչ միջոցառումների և ժամանակակից միջազգային չափորոշիչներին համապատասխան վերահսկողական մեթոդների շնորհիվ:
- Ֆինանսական շուկաների մասնակիցների քանակի և բազմազանության, գործիքների ծավալների աճին խթանելու միջոցով ֆինանսական միջնորդության խորացում:
- Միասնական փիլիսոփայությամբ զարգացող, տնտեսությանն ակտիվորեն սպասարկող, առողջ, կայուն և կառավարելի ֆինանսական ինստիտուտների և շուկաների զարգացում:

Վիճակագրության ոլորտում

- Միջազգային չափորոշիչներին համահունչ արժանահավատ վիճակագրական տեղեկատվության ժամանակին հավաքագրման, մշակման և տարածման կատարելագործում:

Վճարահաշվարկային համակարգի և կանխիկ դրամաշրջանառության ոլորտում

- Կանխիկ դրամաշրջանառության անընդհատության, հուսալիության, անվտանգության ապահովում:
- Անկանխիկ վճարումների խթանում:
- Վճարային համակարգի կողմից տնտեսավարող սուբյեկտների գործառնությունների առավել մեծ ծավալների ու տեսականու արագ և հուսալի սպասարկման ապահովում՝ անընդհատ թարմացվող գործիքների և ծառայությունների կիրառմամբ:

ՀՀ կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ զարգացման բնագավառում

- Մշտապես մնալ տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքող և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդող ու դինամիկ զարգացող կառույց:
- Լինել ՀՀ կառավարության, ինչպես նաև այլ (միջազգային և մասնավոր) կազմակերպությունների հետ կանոնակարգված կերպով համագործակցող հուսալի գործընկեր:
- Լինել հենց իր՝ կենտրոնական բանկի՝ որպես տնտեսական կարևորագույն ինստիտուտի զարգացումը մշտապես վերլուծող, անընդհատ կատարելագործվող, մարդկային ներուժի մասնագիտական մակարդակը մշտապես զարգացնող, սովորող կազմակերպություն:
- Արդյունավետ կերպով տրամադրել կենտրոնական բանկերին բնորոշ ծառայությունների ամբողջ համախումբը:

Ամփոփելով 2006-2008թթ. ռազմավարական ծրագրում արծարծված նպատակադրումների իրականացման արդյունքները, արձանագրելով ձեռքբերումները և դեռևս լուծում պահանջող խնդիրները՝ ՀՀ կենտրոնական բանկն 2009-2011թթ. նախանշում է գործունեության հետևյալ ուղղությունները.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2009 - 2011թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դրամավարկային քաղաքականություն

Հաշվի առնելով միջազգային տնտեսական զարգացումներում տեղի ունեցող որակական փոփոխությունները և գնաճի լիարժեք նպատակադրմանն անցման անհրաժեշտությունը, մշակել և իրականացնել հասարակության համար հասկանալի, թափանցիկ և հստակ ուղղվածություն ունեցող դրամավարկային քաղաքականություն, որը թույլ կտա միջինժամկետ և երկարաժամկետ հատվածներում առավել կառավարելի դարձնել գնաճը և գնաճի սպասումները՝ օժանդակելով տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը և ֆինանսական կայունության ապահովմանը:

2009-2011թթ. ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության զարգացումը կունենա հետևյալ ուղղվածությունը.

- Դրամավարկային քաղաքականության մշակման և կանխատեսումների իրականացման համակարգի կատարելագործում՝ գնաճի բնույթը խորությամբ ուսումնասիրելու միջոցով և դրամավարկային քաղաքականությանն առնչվող որոշումների ընդունմանը և իրականացմանը նպաստող գործընթացների արդյունավետության բարձրացում.
- ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության թափանցիկության բարձր մակարդակի պահպանում և հաղորդակցության դերի մեծացում:

Ֆինանսական համակարգի կայունության ապահովում և զարգացում

ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է վերահսկողության միասնական միջավայրի կայացումը, քանի որ ֆինանսական համակարգի տարբեր հատվածների ռիսկերի համալիր ուսումնասիրությունն ու վերահսկումը միայն թույլ կտա կանխորոշել ֆինանսական համակարգի կայունության ապահովման ուղիները: Տվյալ դեպքում պակաս կարևոր չէ նաև տնտեսության բոլոր հատվածներում առաջացող ռիսկերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, քանի որ այդ ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր կլինի իրականացնել ֆինանսական համակարգի համալիր, միասնականացված վերահսկողության և կարգավորման աշխատանքներ, զարգացնել Հայաստանի ֆինանսական շուկան:

Չարգացման հիմնական ուղղություններն են.

- ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Ֆինանսական շուկաների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչը կհանգեցնի ֆինանսական ծառայությունների արտահանմանը, որն էլ կխթանի ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ Հայաստանը՝ տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու գործընթացին:
- Համահայկական բանկի ստեղծում:
- Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ միջազգային լավագույն փորձին ու զարգացման միտումներին համահունչ կենսաթոշակային համակարգի ստեղծման գործընթացում:
- Ձեռնարկությունների վարկանշման համակարգի կատարելագործում՝ այն մասնավոր հատվածին փոխանցելու հեռանկարով:

Վիճակագրություն

Մեծ նշանակություն տալով դրամավարկային և ֆինանսական վիճակագրության կատարելագործմանը, ՀՀ կենտրոնական բանկը առաջիկա տարիներին ևս կշարունակի հետևել և տիրապետել այս ոլորտի զարգացումներին: Այս առումով ՀՀ կենտրոնական բանկը ամրագրում է զարգացման հետևյալ ուղղությունները.

- Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության կատարելագործում՝ միջազգային լավագույն փորձին, այդ թվում՝ ԱՄՆ կողմից սահմանած չափորոշիչներին համապատասխան:
- Հաշվետու անձանցից ցուցանիշների հավաքագրման գործընթացի արդյունավետության և հավաքագրվող վիճակագրության որակի բարձրացում՝ հաշվետվությունների ընդունման նոր ավտոմատ համակարգի ներդրման միջոցով:
- Վարկային և ապահովագրական ռեզիստրների ինստիտուտների զարգացում:

Վճարահաշվարկային համակարգ և կանխիկ դրամաշրջանառություն

Վճարահաշվարկային համակարգի զարգացումն առաջիկա տարիներին ապահովելու համար ՀՀ կենտրոնական բանկը ամրագրում է.

- ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման ու հուսալիության ապահովում, անկանխիկով իրականացվող վճարումների ծավալների ավելացում, ինչպես նաև դրամաշրջանառության արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում:

ՀՀ կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ զարգացում

ՀՀ կենտրոնական բանկը շարունակում է մեծ ուշադրություն դարձնել իր՝ որպես պետական կառավարման գործառույթներ իրականացնող կարևորագույն ինստիտուտի դինամիկ զարգացմանը: Այս առումով ՀՀ կենտրոնական բանկը միշտ ձգտել է լինել հանրապետության առավել առաջադիմական կառույցների թվում՝ թե՛ կառավարման բնագավառում եվրոպական առաջավոր փորձի իմաստավորման և ներդրման, թե՛ քաղաքականության թափանցիկության և մատչելիության, թե՛ շուկայի մասնակիցների և այլ պետական կառույցների հետ առավել կանոնակարգված գործընկերային հարաբերություններ հաստատելու տեսակետից: ՀՀ կենտրոնական բանկը, շարունակելով արդեն իսկ ձևավորված ավանդույթները և ձգտելով լինել մշտապես բարեփոխվող կառույց, կուղղորդվի հետևյալ զարգացումներով.

- Ժամանակակից պահանջներին համապատասխանող տեղեկատվական այնպիսի համակարգերի ստեղծում, որոնք թույլ կտան ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումներին արդյունավետ իրականացնելու իրենց գործառույթներն ու լուծելու նախանշված խնդիրները նվազագույն ռիսկայնությամբ և աշխատատարությամբ:
- ՀՀ կենտրոնական բանկի գործընթացների անընդատության ապահովման ամբողջական համակարգի ստեղծում: Ժամանակակից պահանջներին համապատասխանող և տեխնիկական հագեցվածությամբ ՀՀ կենտրոնական բանկի ֆիզիկական և տեխնիկական անվտանգության ապահովման համակարգի ստեղծում:
- ՀՀ կենտրոնական բանկում ռիսկերի կառավարման ամբողջական համակարգի ներդրում և զարգացում:
- Հասարակության հետ կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքների կատարելագործում՝ արձագանքելով այս ոլորտում միջազգային զարգացումներին:

- Հետևելով միջազգային զարգացումներին և ուսումնասիրելով լավագույն փորձը՝ ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների իրավական սպասարկման բնագավառում բարեփոխումների իրագործում:
- ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվության արժանահավատության և թափանցիկության, ՀՀ կենտրոնական բանկի բյուջեի պլանավորման, իրականացման և հսկողության ամբողջականության ապահովում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվություններին լիակատար համապատասխանեցում:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության կատարելագործման, արդիականացման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է կադրերի վերապատրաստման և օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության աշխատանքների շարունակականության ապահովման գործընթացը: ՀՀ կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ դերը կարևորվում է նաև նրանով, որ ՀՀ կենտրոնական բանկում աճած կադրերն իրենց փորձն ու հմտություններն են փոխանցում տնտեսության ամենատարբեր շերտերին՝ բերելով մասնագիտական որակի ու պատրաստվածության նոր մակարդակ: ՀՀ կենտրոնական բանկը 2009-2011թթ. համար նախանշել է մի շարք ուղիներ, որոնք ևս բխում են գրագետ, բարձրորակ մասնագետներ ունենալու տրամաբանությունից.

- ՀՀ կենտրոնական բանկի անձնակազմի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ուսումնասիրելով և ներդնելով միջազգային լավագույն փորձը:

Բացի վերոնշվածից, կարևորվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի նյութատեխնիկական սպասարկման աշխատանքների՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, ինչպես նաև շինարարական և բարեկարգման գործընթացի արդյունավետության բարձրացումը: